Մեծերի կարծիքը Աբովյանի մասին



Ֆրիդրիխ Պարրոտ

Ով Հայաստանը չի տեսել, ճանաչելով Աբովյանին՝ կտեսնի Հայաստանը: Նա մի կտոր Հայաստան է, որ իր մեջ ունի նրա ամբողջությունը: Նա վեհ է, ինչպես իրենց լեռները, և խորն է, ինչպես իրենց ձորերը, գիտե մեծահոգորեն տանել, ներել: Նա բարի է անսահման, բայց հաջորդ վայրկյանին կարող է կրակ դառնալով վառվել, միայն թե իր կրակներում այրվի անարդար աշխարհից մի չնչին անարդարություն…

Նա գիտության իր ծարավով, իր համեստ ձգտումներով, իր սակավապետությամբ, ինչպես և իր մտքի հատկությամբ, իր սիրով և կամքի կայունությամբ վայելում էր մեր շնորհապարտությունն ու հարգանքը:

Պրոֆեսոր Կարլ Բլում

Նա ինքը հենց բարեհոգության և պատրաստակամության մարմնացում է և պատիվ կհամարի որևէ հանձնարարություն կատարելը: Այստեղ լինելուց ի վեր ես շատ սիրեցի նրան, քանի որ նրա ողջ էությունը ծարավ է ամեն տեսակի գիտելիքների:

Եթե Դուք լսեիք իմ հային երազելիս, սիրո և ակնածանքի մեջ, որոնք Դուք արթնացրել եք նրա հոգում, ապա գեթ կուրախանայիք նրա սիրալիր պարզամտության վրա…

Ավետիք Իսահակյան

…Չորս գիրք ունի հայ ժողովուրդը, որ, ինչպես չորս բարձր սյուներ, կրել են հայ ժողովրդի ոգին, նրա պայքարի իմաստը, նրա լավագույն ապագայի տենչանքները, նրա իդեալները:

Մովսես Խորենացու Հայոց պատմությունը, Եղիշեի Վարդանանց պատերազմը, Նարեկացու խոսքը անմահության և հավերժության հետ և Աբովյանի «Վերքը»: Այս նվիրական գրքի մեջ հրեղեն լեզվով արտահայտվում է մեր ժողովրդի խորագին վիշտը, նրա պայքարը և անշիջանելի պաթոսը …

Պիոն Հակոբյան

Ամենահայ գրողը, ամենամեծ հայրենասերը, ամենահուզաշատ անհատականությունը, բանաստեղծական երևակայության և ստեղծագործական կարողությունների անմրցակից հանճարը, ամենաանկեղծը, ամենամաքուրը, ամենավեհը:

Աբովյանը հայ հայրենասերներից մեծագույնն է, ինքնամոռաց ու փառապած, որի սրտի զարկերակները փրոփում են նրա գրչի փակից դուրս եկած ամեն բառի, ամեն խոսքի տակ:

Հերման Աբիխ

Աբովյանը մի տեսակ հանճար է: Ձեզ համար հետաքրքրական կլինի մի նամակ կարդալ նրանից, որը թեև ըստ ասիականի՝ հիպերբոլիկ է, բայց և այնպես, թույլ է տալիս նայել այդ բացառիկ մարդու արտասովոր հոգուն... Ասիացին չափազանց հարգանք է տածում դեպի ճշմարիտը, իսկականը. ցույց տվեք դա նրան, ստիպեցեք նրան հավատալ դրա գոյությանը, և դուք նրան կգրավեք:



Կարլ Կոխ

Հնարավոր է, որ այս կամ այն հարցում նա շեղվում էր ժողովրդական կրթության բնագավառում պետության նախագծած ուղուց, քանի որ արտաքին ձևականությունը չէր գոհացնում նրա՝ դեպի վեր սավառնող հոգին... բայց, անկասկած, մինչև հիմա Անդրկովկասը չի տեսել այնպիսի ուսուցիչ, որն այնպիսի սիրով ու այնպիսի զոհաբերությամբ նվիրված լինի մանուկների դաստիարակության գործին, ինչպես որ Աբովյանն է... Եթե նրան գործուն աջակցություն ցույց տան... նաև պահանջված չափով գնահատեն նրան, սպասելի է, որ Երևանից մի նոր լույս ծագի դժբախտ ու մոռացված, դարերով ոտնահարված հայ ժողովրդի վրա:



Սերո Խանզադյան

Հայաստան աշխարհում կան երկու սրբավայրեր՝ Օշականի Մեսրոպ Մաշտոցի նշխարները և Մեծ ռաբունապետ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանի Քանաքեռը: Այս սուրբ երկրորդությունը և՛ խաչ է մեր ազգի համար՝ լուսավորչի պսակով, և՛, մանավանդ, գոյատևման առհավատչյան...



Ակադեմիկոս Բրոսսե

Եվ ահա հայտնվել է մի անհատ, որն առաքելություն է ստանձնել լուսավորելու իր ազգը, որն իր բովանդակ ջերմեռանդությամբ նվիրվել է այդ գործին, և որին չեն կասեցրել հալածանքն ու հակառակությունները:

Համո Սահյան

Աբովյանի մեջ խտացված են Մաշտոցի դիվանագիտական հանճարը, Խորենացու հայրենասիրական կրակը, Նարեկացու կատարելության աղոթքը: Աբովյանը մեր ազգային ոգու մարմնացումն է: Եվ եթե ինչ-որ չափով հաղորդվել եմ այդ ոգուն և իմ մեջ կրում եմ այդ ոգու մասունքները, դրա համար պարտական եմ մեր ժողովրդի մեծերից մեկի՝ Աբովյանի ժառանգությանը:

Ավգուստ Հաքստհաուզեն

Աբովյանը մեկն էր այն ազնիվ, բանիմաց և արդարամիտ մարդկանցից, որոնց մենք կյանքում սակավ ենք պատահում:

Անհայտ ֆրանսիացի

Աբովյանի հետ տեսնվեցա և իրավամբ զարմացա նրա հմտության վրա: Գերմանական փիլիսոփայության և գրականության հայացքները նրան այնպես ծանոթ էին, որ նույնիսկ եվրոպացին կարող է օգուտ ստանալ նրա կարծիքներից:

...Տարօրինակ երևույթ մարդկային լուսավորության. հայի բերանն արձագանքում է այնպիսի գաղափարների, որոնք մեր մեջ դեռ նոր են տարածվում: ... Զարմանալի բան պիտի լինի, եթե Ասիայի լուսավորությունը Կովկասից սկսի, և Պրոմեթևսի ժայռը տեսնի իր չարչարանքի արդյունքը: